ARDZIV ԱՐԾԻՒ

www.ardziv.org

ՀՅԴ ԳԵՄ-Ի ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ • OFFICIAL ORGAN OF ARF YOC • ORGANE OFFICIEL DE FRA OJC • VOL. 9 No. 2

Ինչ՞է Հայ Դատը

Montreal • Toronto • Laval • Hamilton • St. Catherines • Cambridge • Vancouver • Windsor

"All that is necessary for the forces of evil to win this world is for enough good men to do nothing."

Edmund Burke

ԱՐԾԻՒ
ARDZIV
Հ.Յ.Դ.Գ.Ը.Մ.
ԱՐԾԻՒ-ի խմբակիցները

Խմբագրական.....4

When enough is not enough.....5
Linda Kharaboyan Levon Shant Chapter

Ին՞չ է Հայ Դատը.....6
Վարանդ Եսայեան Լեւոն Շանթ մասնաճիւղ



Remembering the Armenian Genocide.....7
Hovig Waswassarian Aram Manougian Chapter

Ու՞ր է Պահանջատէր մեր Երիտասարդութիւնը.....8
Սոնիա Բարսեղեան Լեւոն Շանթ մասնաճիւղ

What's in it for me?.....9
Apraham Niziblian Levon Shant Chapter

Propaganda: Spread ours today.....10
Varant Yesseyan Levon Shant Chapter

Մշակոյթը որպէս միջոց.....11
Լալէ Մանճիկեան Լեւոն Շանթ մասնաճիւղ

We.....11
- Translated by Gerald Papasian (Sojourn at Ararat)
Gevorg Emin (1919-)

Armenian prime minister shot.....12

ՈՎ Է ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ.....13
Ռուբինա Քիւփէլեան Լեւոն Շանթ մասնաճիւղ

Խեղդամահ.....14
«Կարմիր Լուրեր Բարեկամէս» Միամանթօ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նախորդ «Արծիւ»ի թիւով հայ երիտասարդութեան կոչ ուղղեցինք քաղաքական գետնի վրայ աշխուժանալու եւ այսպիսով օգտակար մասնիկ մը դառնալու հայ իրականութենէն ներս: Սակայն, ինչպէս աշակերտը կը պատրաստուի քննութեան, լաւատեղեակ նիւթէն եւ որոշ չափով իրեն ներկայացուելիք հարցումներէն, եւ կամ զինուորը կը պատրաստուի կռուին, ֆիզիքապէս մարզուած, լաւատեղեակ իր թշնամիին տկարութիւններէն եւ ուժերէն, պէտք է մենք մեր կարգին յստակացնենք մեր մարտահրաւէրը: Այսինքն, ինչ՞ կը նշանակէ քաղաքականապէս՝ եւ ամենակարեւորը ինչ՞ կը նշանակէ Հայ Դատ:

Այ՛ո, երիտասարդութեան աշխուժացումը փափաքելի է, քաջարելի, եւ մեր միութեան առաջնահերթ նպատակներէն, սակայն հայ երիտասարդութիւնը պարտի նաեւ գիտնալ իր ուժերը համադրել, ճշդել իր թիրախները եւ կազմակերպուած աշխատանք տանիլ զանոնք իրականացնելու:

«Արծիւ»ի այս թիւը ուրեմն կը տդամադրենք Հայ Դատին:
Շատեր կը հաւատան, թէ Հայ Դատը կը ներառէ միայն Ապրիլ **24**-ի առնչուած աշխատանք: Այ՛ո, Հայկական ցեղասպանութեան ճանաչումը Հայ Դատի ամենակարեւոր աշխատանքներէն է, սակայն ոչ միակը:

Իր ամենալայն սահմանումով, Հայ Դատը կը ներկայացնէ հայութիւնը յուզող Կամ հետատքրքրող Քաղաքական որեւէ հարց: Ան միջոց մըն է «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան» տեսլականը իրականացնելու: Հետեւաբար, հայ Դատ կրնանք սեպել նաեւ Ղարաբաղի հարցը քննելով, կը նախատեսեն որոշ զիջումներ պարտադրել եւ Ղարաբաղը վերամիացնել Ազրպէյճանին, Հայ Դատի պարտականութիւններէն մէկը կ'ըլլայ Սփիւռքի մէջ այդ ուղղութեամբ քաղաքական աշխատանք տանիլ: Քաղաքական աշխատանք կրնանք հաշուել հանդիպումներ կառավարական դէմքերու հետ, հանրագրութիւններ **(petition)** կազմակերպել, ինչպէս նաեւ մեր ժողովուրդը տեղեակ պահել նման դէպքերէ, եւ ըստ կարիքին դիմել իր աջակցութեան:

Այս օիրնակը կը բերենք պարապէս յստակացնելու թէ Հայ դատը չէ սահմանափակուած Հայկական ցեղասմանութեան ճանաչումով: Ուստի, կ՚անդրադառնանք թէ քաղաքականօրէն մեր տանելիք աշխատանքը աւելի ընդարձակ է քան շատեր կը կարծեն: Իսկ, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը այն կուսակցութիւններէն է, որ կը գործէ Հայ Դատի լայնածաւալ իմաստով: Առ աւելին, Դաշնակցութեան Հայ Դատի յանձնախումբերը կը բաղկանան ոչ միայն շարքային անդամներէ, այլ նաեւ ոչ-կուսակցական հայրենակիցներէ:

Գալով, Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան, ան իր քաղաքական գործունէութիւնը կը տանի վերոյիշեալ յանձնախումբերուն զուգահեռ կամ ընդհանրապէս համագործակցութեամբ:

Հայ երիտասարդութիւնը կարեւոր մասնիկ մը ըլլալով հայ իրականութեան, բնական է որ ան մեծ դեր ունենայ խաղալիք քաղաքական ծիրէն ներս:

Նախորդ «Արծիւ»ի թիւով քաղաքականորէն աշխուժանալու հրաւէրը տակաւին ի գօրու է, սակայն ինչպէս նշուեցաւ պարզապէս աշխուժանալը բաւարար չէ: Պէտք է մեր մտքերը մարզել եւ կազմակերպուած ձեւով դիմագրաւել քաղաքական մարտահրաւէրները: Այսպիսով է միայն որ պիտի յաջողինք օժանդակել ո՛չ միայն Գանատայի սփիւռքահայութեան, այլ նաեւ հայ ազգին ընդհանրապէս:■

When enough Is not enough

Linda Kharaboyan
Levon Shant Chapter

As I contemplate the ideologies that the ARF has taught me throughout the years, while trying to determine what type of "divine" message I should be delivering through this article, I cannot help but wonder if it is possible to speak of sacrifice without sounding like a hypocrite.

Sacrifice is a word which is understood by most of us; nevertheless, in reality, the word is rarely put into practice and remains quite theoretical. Surely, I am not the ideal person to be addressing the issue of sacrifice, for I have never been asked to lay my life on the line for any given cause, nor have I been the one to sacrifice my time, at all costs, for the benefit of the "miyoutyoun." However, when approached by a junior member of ARDZIV's editorial board - call it moral obligation or what have you - I had a very hard time refusing the request. This having been said, just to make it clear from the very start, in no way do I claim to be an authority on the subject. My opinions are derived by personal experience, historical data and just plain daily examples of people who have sacrificed their time and lives to promote the understanding and goals of the Armenian Cause.

The ultimate purpose of this article is to shed a light with regards to the amount of effort the average young person of Armenian descent should be devoting, personally and/or collectively, to issues relating to "Hay Tad."

As far back as I can recall, we have always been taught that at some point in time, someone, somewhere, has sacrificed their life to preserve our cultural heritage and identity. Going as far back as the "Vartanantz baderazm", where we fought to keep our Christianity, up until the recent upheavals in Artzakh, where many young lives were lost in order to maintain Artzakh's autonomy and Armenian identity, we have witnessed how, over the years many have fought against the threat of total annihilation and died in the name of national pride. We have learned that as young Armenians living in the Diaspora, we are different from others. Different, because we did not choose to leave our homeland and come here of our own free will, but because our forefathers died during the first Genocide of the 20th century and because we were uprooted and driven out of our natural habitat. And hence, everyday of our lives is a struggle -a struggle to keep our language, a struggle to keep our values and our traditions, a struggle not only to remember our history but to teach it to the following generations.



We are living in a society where close to everything is handed to us on a silver platter. We have become used to taking the easy way out and caring about nothing else but our own personal gain, comfort and satisfaction.

Sacrifice means giving up that movie on the Tuesday night to make it to that "Hay Tad joghov".

When was the last time we did anything for our community? When was the last time we thought about what our grandparents went through to survive as Armenians in this world? Now is the time to stop and to take a very good look at ourselves and ask ourselves if our great grandparents would be proud of the Armenians we have become. We might also ask ourselves if we have done everything humanly possible to honor their memories. If we answer NO to any of these questions than we still haven't done enough for "Hay Tad." We must continue our research, we must educate ourselves, we must keep on writing, publishing, lobbying, filming, painting, teaching...basically doing whatever it takes to prevent our history from being forgotten.

In other words, every person of Armenian origin must acknowledge that they have a role to play in the recognition of the Armenian Genocide. Even the tiniest effort counts, and that faithfully represents the whole essence of Hay Tad. Sacrifice does not exclusively imply demonstrating courage on the battlefield, but does require the courage to give up some of our commodities and a little part of ourselves for a worthy and most noble cause.

Sacrifice means giving up that movie on the Tuesday night to make it to that "Hay Tad joghov". Sacrifice also means getting a few hours less sleep on that Sunday morning to help your "varchoutyoun" sell those calendars at church. Sacrifice entails finding the time to write that letter of protest to that editor who published the article promoting Turkish revisionist history. Sacrifice implies finding the courage within ourselves to confront organizational or structural problems instead of washing our hands or running away from them. And finally, sacrifice requires us to lead by example and thus pass on the knowledge we have acquired to the upcoming generation.

All of this is sacrifice...and only when we realize this, will the 1.5 million victims of the Genocide finally rest in peace and will our great grandparents be proud of the Armenians we have become. ■

ԻՆ՞Չ Է Հայ Դատը

Վարանդ Եսայեան
Լետն Շանթ մասնաճիւղ

Ծանօթացում

Երիտասարդութեան մեծամասնութիւնը կը յուսանք գիտէ թէ ԻՆ՞Չ է Հայ Դատը. սակայն՝ նոյն մեծամասնութեան մէջ փոքրամասնութիւնն է որ հետաքրքիր է գիտնալու թէ ԻՆՉՊԷՍ կ'ընթանայ անոր աշխատանքը: Ձեր գործը դիւրացնելու եւ նաեւ ձեզի, սիրելի ընթերցողներ, ամփոփ եւ օգտակար յօդուած մը փոխանցելու մտքէն մղուած, համադրեցինք հարցազրոյց մը Մոնթրէալի Հայ Դատի յանձնախումբի ատենապետին՝ ընկեր Ռուբէն Գույումճեանի հետ, մեր կազմակերպութեան տարած աշխատանքին մասին:

ԾՐԱԳԻՐԸ

Ինչպէս ամէն յանձնախումբ՝ Հայ Դատի յանձնախումբը ունի իր սկզբնական ծրագիրը: Ան տարիներու ընթացքին կրնայ ենթարկուիլ փոփոխութիւններու, յաւելումներու կամ բարեփոխումներու, նայած օրուան պահանջներուն, սակայն խորքը միշտ եղած է անընկճելի գաղափար մը, որն է մեր Պատմութեան եւ մեր Մշակոյթին ճանաչումը աշխարհի տարածքին: Այս ամէնը տակաւին անկախ Յեղասպանութենէն: Հայ Դատի ծրագրի հովանիին տակ կ'ինյայ դարձեալ ներքին աշխատանք մը, նոյնքան անհրաժեշտ, եւ այդ մէկն է՝ ժողովուրդին, եւ մասնաւորաբար երիտասարդութեան մօտ քարոզչութիւնը՝ զայն հետաքրքրելու, տեղեկացնելու, աշխուժացնելու եւ շարժումին մօմէնդումը պահելու յոյսով:

ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայ Դատը կը վստահի իր անդամներու եւ գործողներու բազմատաղանդութեան վրայ որպէսզի յաջողցնէ իր ծրագիրը: Ինչո՞ւ «բազմատաղանդութիւն»: Պարզապէս որովհետեւ անոնց գործը տարբեր հաշիւներ ունեցող, տարբեր մտայնութիւններու եւ մտածելակերպերու տէր անձերու հետ է եւ անոնց բոլորին հետ հաւասար ընկերային յարաբերութիւններ պէտք է պահուին: Ականջներն ու աչքերը տասնապատիկ բացուած՝ պէտք է նաեւ ամենօրեայ նորութիւններէն տեղեակ ըլլալ: Այս բոլորը որպէսզի կարելի ըլլայ մօտենալ եւ յարաբերիլ երեք զանազան տեսակի դէմքերու՝

-Ակադեմականներու եւ պատմաբաններու հետ,
-Քաղաքական դէմքերու հետ,
-Մամուլին հետ:

Պատմաբաններու հետ Հայ Դատի անդամին աշխատանքը կամրջային է. անոր պրպտումները օգտագործելով իբրեւ հեղինակաւոր փաստ, Հայ Դատի Յանձնախումբը կը մօտենայ քաղաքական դէմքերուն: Այս վերջիններուն մօտ իր աշխատանքը կրկնապատիկ է. պէտք է նախ անոնց համոզել որ մեր Դատը արդար է, եւ ապա անոնց փաստել, օգտագործելով՝ պատմաբաններու փաստերը, թէ դիմացի քաղաքական նէմէսիսը ահաւոր կը սխալի կամ իրաւունք չունի: Եւ անշուշտ, «**one-time**» խնդիր չէ, այլ շարունակական աշխատանքի կը պահանջէ: «**Lobbying**»-ը կը մնայ լաւագոյն միջոցը որով յարաբերութիւններ կը հաստատուին այն անձերուն հետ, որոնք մեր Դատը խորհրդարանին մէջ կառավարութեան ուշադրութեան պիտի յանձնեն:

Մամուլին հետ գործը ոչ թէ դժուար, այլ գոնէ զգայուն է: Թերթերը կը տպեն այն ինչ որ հետաքրքրութիւն կը ստեղծէ այդ շաբթուան, այդ օրուան կամ ալ նոյնիսկ այդ կէսօրուան համար: Նկատի ունենալով այս փոփոխական պայմանները, պէտք է մամուլին դիմել երբ որ նպաստաւոր կացութիւն մը ներկայանայ, որպէսզի այնքան աւելի իմաստաւոր եւ օգտակար ըլլան Հայ Դատի դրկած նամակները, հանրագրութիւնները եւ այլ յօդուածները: Այս ճիւղին, ինչպէս միւս գործունէութեան ճիւղերուն մէջ՝ դիմադրութիւնը ահաւոր է:

ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անկարելի է խօսիլ Հայ Դատի յանձնախումբի աշխատանքին մասին, առանց ակնարկ մը նետելու անոնց հանդիպած դժուարութիւններուն վրայ: Եթէ ցանկ մը պատրաստելու ըլլայինք մեծագոյն արտաքին արգելքներուն, հետեւեալը կ'ըլլար՝

-Թրքական հակայարձակումները՝ որոնց մէջ կ'իյնան առեւտրական համաձայնութիւնները, «**revisionist**» քաղաքականութիւնը եւ հակահայկական փրոփականտն ու «**lobbying**»-ը:

-Մամուլին սահմանափակուած ազատութիւնը՝ պետութեան շահին ի նպաստ:

Թրքական դիմադրութիւնը ծանր կշիռ ունի: Անոր առաջնահերթ առաւելութիւնները նիւթականն ու բովանդակ ազգային համակերպութիւնն են: Անոր ճանկերը կ'երկարին ովկիանոսներու վրայէն եւ իրենց մարդկային տիպարը կը ստանձնեն թրքական դեսպաններու դիմագիծով:

Սակայն, ըստ ընկեր Գույումճեանին, իրենց տկարութիւնը կը գտնուի անոնց պակաս մարդուժին մէջ: Առանձին անձ մը, հազարաւոր քիլոմէթրներ հեռու իր հայրենիքէն, չի կրնար ստանձնել հակայարձակումի պատասխանատուութիւնը:

Մամուլի կողմէն՝ արգելքները նոյնքան կարեւոր են: Ընկեր Գույումճեան եւրոպական թերթերու ճկունութիւնը կը գովէ.

«Եւրոպայի մէջ՝ այս բանը (լրագիրներու արտայայտուելու ազատութիւնը) քիչ մը աւելի կարծեմ կլորցուած է. աը մինչս դեռ անձեր կան որ իրենց մտածածը շատ նուրբ ձեւով կրնան օրագիրներու մէջ դնել եւ կը տպուի. կը տպուի եւ կը բաշխուի...»

Դարձեալ ըստ ընկերոջ, տեղական մամուլը կաշկանդուած է քիչ թէ շատ զինքը ղեկավարողներու ձեռքով: Մինչեւ այն ատեն որ տնտեսականօրէն թէ քաղաքականօրէն անհրաժեշտ →7

REMEMBERING THE ARMENIAN GENOCIDE

Hovig Waswassarian
Aram Manougian Chapter

As April 24th approaches, we as Canadian Armenians must remember the tragic happening that began on the twenty-forth day of April 1915 and carried well into the nineteen twenties.

The Armenians were one of the first victims of genocide in the twentieth century. The Young Turks sought out a plan to eliminate the Armenian people living in Anatolia. The first ones to be eliminated would be 100,000 Armenian conscripts within the Ottoman armed forces. Next, the Armenian community leaders throughout the empire would be arrested and killed. Finally, the remaining Armenians; elderly, women, and children were lead into the Syrian Desert of Der el Zor and were mercilessly tortured and massacred by the Turks. Many others died in the desert due to thirst, starvation, or sunstroke. As this brutality was taking place, the rest of the world stood by and did absolutely nothing to help the Armenian cause. The mass extermination of the Armenian people continued. In the end, 1.5 million Armenian men, women and children lost their lives due to the brutal crimes of the Young Turks.

The Armenians were one of the first victims of genocide in the 20th century and not the only ones. During the Second World War, fascist leader Adolph Hitler's Nazi Party in Germany tormented the Jews by sending them into ghettoes, transit camps and extermination camps. In these camps, Jews were forced to do hard labor. The ones who survived were eventually killed by such means as gas chambers, acid showers and other gruesome treatments. At the end of the Holocaust, over six million Jews had lost their lives.

These 20th century tragedies have not been totally forgotten. However, they do deserve more attention. In my opinion, these were the most vicious crimes of our times. We have forgotten too soon. Yesterday, the victims were "only" the Armenians, then "only" the Jews and tomorrow?" The questions asked should be about the future (will we ever learn that violence is not the answer?). Perhaps society will learn from these brutal crimes and see that there is no reason for such actions against humanity.

April 24th is a day to remember and honor the memory of the 1.5 million Armenians who lost their lives. It is important to recognize and understand the Armenian genocide of 1915 so that it is not repeated. Atrocities such as this one should not be tolerated. There is no reason for such crimes as the one that occurred 85 years ago on April 24th. ■

→6

ըլլայ Թուրքիոյ հետ առեւտուրը Գանատայի կամ որեւէ մէկ երկրի համար որ կը խորհի որդեգրել Հայ Դատի ներկայացուցած Ցեղասպանութեան բանաձեւը՝ պարիսպները պիտի շարունին։

ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Վերջապէս՝ այս ամէն աշխատանքը բանի մը պիտի ծառայէր։ Ուստի՝ կտրուկ (եւ ոչ անպայման ամբողջական) ցանկ մը Հայ Դատի ձեռք բերած մեծագոյն յաղթանակներուն, անցեալ տասնամեակի ընթացքին, ըստ ընկեր Գույումճեանի՝

1996-ի բանաձեւը որ կ'անցնի Գանատայի խորհրդարանին մէջ՝ ճանչնալով ցեղասպանութեան իրողութիւնը. սակայն, «ցեղասպանութիւն» բառը բանաձեւէն կը վերցուի։

-1998-ի բանաձեւը որ Մոնթրէալի քաղաքարանը կ'ընդունի այնպէս ինչպէս որ կը ներկայացուի իրեն։ Նոյն բանաձեւը դիւրութիւնը կու տայ յուշարձանի ծրագիրը իրագործելու։

-1999-ին Ճիլերն Ռիտի գործած «**gaffe**»-ը։

Յաջորդ թուին մէջ Խորացում
*Ի՞նչ գործ կատարած է Հայ Դատը 1990-էն մինչեւ այսօր։ Երիտասարդութեան ուղղուած յօդուած մը որ աւելի մանրամասնօրէն պիտի խորանայ «**behind the scenes**» գործունէութեան մէջ...*

ՈՒՐ Է ՊԱՀԱՆՋԱՏԷՐ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Սոնիա Բարսեղեան
Լեւոն Շանթ մասնաճիւղ

Թեւակոխած նոր հազարամեակը, բոլորս մեր նուաճումները կը վերանայինք եւ հարցրականի տակ կը դնենք մեր անցեալը, նոր շունչով ընդգրկելու համար մեր ապագան. կը վերլուծենք մեր ազգային պատմութիւնը այս վերջին դարու ընթացքին որպէսզի եզրակացնենք թէ իրաւամբ, քսաներորդ դարը, մեր ազգին համար եղաւ Հայ Դատի հանդէպ պահանջատիրութեան դար։

Հակառակ որ հայոց ցեղասպանութիւնը գործադրուած **1915**-ին եղաւ դարու առաջին ցեղասպանութիւնը , դժբախտաբար կը շարունակէ չճանչցուած մնալ եւ տակաւին հայ ժողովուրդը չէ՛ ստացած իր արժանի արդարութիւնը։

Այս պահանջատիրութեան գերագոյն դերակատարը պէ՛տք է ըլլայ անկասկած հայ երիտասարդութիւնը որովհետեւ ա՛ն է յեղա ոխութեան ոյժը եւ ա՛ն է որ կը ձգտի բարելաւել ապագան։

Մեր պահանջատիրութեան պատմութիւնը գրեցին մեր ազատամարտիկները. Սողոմոն Թեհլիրեանէն Լիզպոն, մինչեւ մեր Արցախի ազատամարտիկները, երիտասարդութիւնը ներշնչեց հայ ժողովուրդը եւ անոր տուաւ յոյս եւ հաւատք Հայ Դատի ճանաչման ուղղիով։

Սակայն, գաղութային աշխատանքներուն մէջ, հետզհետե ակնյայտ է երիտասարդութեան մօտ հետաքրքրութեան պակասը Հայ Դատին հանդէպ։ Ըլլալով գանատացի երիտասարդներ հիւսիսային ամերիկեան մշակոյթին մէջ մեծցած, ունինք բոլոր երիտասարդներուն նման մտահոգութիւններ մեր ապագային հանդէպ։Մեր կեանքի նպատակն ու պարտականութիւնը, Հայ Դատի հանդէպ մեր պահաջատիրութիւնն է եւ ա՛յս է որ մեզ կ՚ անջատէ այլ երիտասարդներէ որուն առջեւ հայ երիտասարդութիւնը չի կրնար անտարբեր մնալ։

Իտէալ պայմաններու մէջ, հայ երիտասարդը ըլլալով քաղաքական նկարագրի տէր, անոր մէջ պահանջատիրութեան զգացումը պէտք է ըլլայ ի ծնէ։ Երբ այս մէկը բացակայ է, մեր պարտականութիւնն է իբր գաղութ այդ պահանջատիրութիւնը արթնցնել մեր երիտասարդութեան մօտ։

Նախ՝ հայեցի դաստիարակութիւնը կը սկսի մեր տուներէն։ Հայ ծնողքը պէտք է գիտակից ըլլայ որ անոր դերը կը տարբերի օտարներէ։ Ո՛չ միայն ան պէտք է դաստիարակէ տիպար, մաքուր նկարագրի տէր երիտասարդներ այլ տայ նաեւ իր զաւակներուն հայկական եւ ազգային դաստիարակութիւն։ Հայ ծնողքն է որ իր զաւակը պիտի անդամագրէ հայկական կազմակերպութիւններու քաջ գիտնալով որ ան պիտի ստանայ հայեցի դաստիարակութիւն։

Ծնողքի դաստիարակութեան զուգահեռ, հայ դպրոցը կարեւոր դերակատար մըն է ։ Հայ դպրոցի նպատակը միա՛յն հայ լեզու եւ պատմութիւն սորվեցնել չէ։ Այլեւ հայ դպրոցն է որ ազգային գիտակցութեան գաղափարը պէ՛տք է արթնցնէ մեր երիտասարդութեան մօտ։ Հո՛ն է որ պիտի սորվին թէ Հայ Դատի աշխատանքը աւելին կը պահանջէ քան միայն հայ դպրոց յաճախել։

Եւ վերջապէս, երիտասարդութեան մօտ պահաջատիրութեան եւ ազգային գիտակցութեան գաղափարներու զարթման համար, գաղութի մէջ գործող պատասխանատու մարմինները դեր ունին կատարելիք։ Պէտք է որ առիթ տան երիտասարդ ներուն սորվելու եւ սխալելու, պէտք է ստեղծեն յարմար մթնոլորտ գաղափարներու ոխանակման որովհետեւ հայ երիտասարդն է որ ապագային ձեռք պիտի ձգէ ղեկավարութեան սանձերը։ Մեր կազմակերպութիւնները բո՛լորն ալ քաղաքական, մշակութային, մարզական թէ հոգեւոր միջոցներով կը գործեն Հայ Դատի իրագործման նպատակով, եւ մեր երիտասարդները, այս կազմակերպութիւններուն մէջ գործելով գիտակից պէտք է ըլլան որ կը նպաստեն Հայ Դատին։

Մեր պարտաւորութիւնն է իբրեւ ժառանգ ցեղասպանութեան , **85** տարիներ ետք, հաւատարիմ մնալ մեր նախնիներուն եւ չդադրիլ ու շարունակել պայքարիլ հայ ազգին շահերուն համար։ Պէտք է որ մեր երիտասարդութիւնը չդադրի պահանջատէր ըլլալէ որպէսզի չմոռցուի մեր ցեղասպանութիւնը որ համայն մարդկութեան պատմութիւնն է։ ■

Apraham Niziblian
Levon Shant Chapter

What's in it for me ???

Now that I got your attention, I'd like to let you know just exactly what's in it for you!

1) Six weeks in a capital city- close but not exactly as HOT as Montreal;
2) A summer work experience worth mentioning on your C.V. (unlike that McDonald's job last year);
3) Meeting of East and West coast fellow A.Y.F.-ers!

If you know what I'm talking about, stop reading! If not, and you still are interested... read on, it'll be worth your while! Listen, as the years pass and as university years stream by, one thing is well appreciated by future employers: work related experience! Well here's your chance to get it! Not many youth of our age get the opportunity to really complete such a challenging internship program, but hey! you've got the chance NOW, so take up the challenge.

Of course, I'm talking about the Armenian National Committee of America Internship program or, as it's commonly known, the Hay Tahd internship in Washington, DC.

At nineteen or twenty, when we're about to make choices that will surely affect our futures, an internship in such an office seems practically necessary. Well, I had that opportunity just as I turned nineteen.

For six weeks, with other Armenian youth from North America, I shared a work/life experience, that I still cherish!

Washington, DC, the American capital, is a highly attractive city, where six weeks is not enough to really live the DC experience. Then there are those political institutions that are right there within your reach! (For those who maintain that they hate politics and anything political, don't judge before you've lived the DC experience. In short, it's not Ottawa!)

Each of the participating youth had his/her own project and all the support needed to accomplish the task assigned. My research was basically on Turkish lobbying groups. I had to find out about the lobby firms hired, the amount that the Turkish government was spending and the purpose the particular firm was hired for (i.e. human rights, tourism, defense, etc...) I found out very quickly that, back in the summer of 1993, Turkey was spending an annual 6-7 million U.S. dollars to take home investments of over 230 million! Rather interesting!

For six weeks, apart from sharing my summer with new people in a new city, I worked on gathering this sort of information. Others worked on graphic designing the Transcaucasus, or establishing a grading system for Senators and Congressmen. In short, each was given a special task according to one's interests!

No special training necessary need be completed before you apply, and you need not be a political science student, just as I wasn't; but once back to your hometown, I don't guarantee you won't want to change- I did.

To conclude this short introduction to the ANCA Summer Internship Program, I'd like to say that it will definitely be time well invested and an experience that you will never forget!

I know many programs say this, but as a young adult of Armenian origin, you will feel gratified and knowledgeable! You will also feel you have contributed your share in "Hay Tad" activities!

Oh yeah! I also had a great time! ■

Varant Yessayan
Levon Shant Chapter

Propaganda: Spread Ours Today!

Disclaimer: The following article reflects the views of its author on propaganda whose sole purpose is to spread an awareness to a very worthy cause affecting a minority group. It does not in any way constitute an apology for the horrendous events and crimes that have occurred under the direct or indirect influence of mass indoctrination and/or brainwashing, nor does it encourage the use of propaganda for such purposes.

Did the title frighten you? Why? Have you realized that every time you hear the word "propaganda" (whisper now...), somehow images of Nazi hordes marching to conquest, swastika flags flowing madly in the wind, pops up in your head? Have you ever wondered why? Perhaps the propaganda of "propaganda" has not been that favorable in this century. Special mentions of merit go out to the intellegentia of marketing for having rendered the world blind to the fact that sanitized and asepticized propaganda in 1999 resembles "Gap" ads and "Coke" commercials. Just because it looks like harmless youths singing long dead AM tunes (enforcing stock market mentalities: "everybody INvests," anyone?) or portrays computer-generated hugeable polar bears (chugging sugared water like it's nobody's business) does not signify that it is any less influent on you or your habits of life as a twentieth century denizen. It might sound that I am writing an apology for propaganda. I am. As absurd as it sounds, propaganda gathers people with similar mindstates to create a force to be reckoned with. It produces a unity in social consciousness within the community or social circle it is spread and contributes to rendering the masses into an unstoppable, indomitable, often nationalist, sometimes patriotic, partisan fighting machine. Now, apply this bewildering and disturbing theory to Armenians. Are there possibilities materializing now when you close your eyes and hear "propaganda"?

One of these possibilities can be considered the neo-weapon of the youth. You folks know it as the Internet. More than a tool and an instant access to "nasty" sites, it is the virtual "Weapon X" of today when it comes to making a brief but infinitely more powerful statement. The anonymity of an alias provides the user with unrestricted freedom of expression. As well, the stretches of the global village are endless. So why not use all these elements to the ultimate advantage?

Mass insertion of the same message on multiple message boards, "swarming" if you will, is an ideal way of spreading propaganda. In this case, a message (keeping it short and succinct, as well as curse-free is key) about the Genocide recognition, backed up by a few historical, irrefutable facts, ought to stir up some thoughts and activate keyboards everywhere. Surprisingly, not a lot of people are aware of the Genocide, and those who are have all their facts mixed up. "Clarify" things for them, without sounding like an insolent, apathetic nationalist hot-head. Read the replies you might get to your posts and answer every one with assertiveness and empathy. Since credibility is reliant on and is often attained with confident, well-written (and calm-toned) posts that add insight (as opposed to bellowing seamen's colorful vocabulary) into a particular event or reality, you should always aim for these.

Pertaining to the websites where your messages might be well-received or, at the least, answered, the ones that are politically inclined often suggest comments on your part. Use this. Write something short and sweet and watch the virtual ink flow. You will be pleasantly surprised. Beware of Turkish websites, especially revisionist ones, but don't ignore them. They are the weakest defense of the Turkish government. Most of them are off-lined now, but the ones that remain often regard the denial of the Genocide and try to, in the most "imaginative ways", revise and dilude the events of 1915 by incorporating out-of-context quotes and silly percentages that do not withstand the slightest anthropological depthening. These sites should serve as a constant reminder of the verbal armements that the nemesis posseses. They already have a well-oiled, well-maintained, and, most of all, widespread propaganda machine that chronically churns the most revolting political lies and attenuation this side of the Shaoh denial. Sites that do offer a relatively attentive ear to what you have to say are the major news networks' websites, i.e., ABC, CNN, BBC, as well as the important published magazines such as Time and Newsweek.

On a, lighter, more popular but equally essential note, musical bands' websites offer a less formal, less 'treat-you-like-any-old-hexadecimal' approach. Epic Records, Rage Against The Machine's record company, entertains a website where fertile minds come to mingle and to discuss either the band or different political issues. Their awareness to everyday goings-on in the political battlefield is higher than most other bands' fans. Also worthy of note are Quicksand's and System Of A Down's websites. The latter even posts Armenian-related news on its news page, front and center. The messageboards are full of eagerly conversational folk always ready to lend an eyeball to your post, if it is inviting enough, which brings me back to the length and pertinence of the message. Take full advantage of these websites.

And finally, lend your constant support to Armenian Genocide websites by visiting them regularly and reading up on whatever facts you might ignore. Knowledge is definitely power whenever the Net factors in the equation of Genocide recognition.

Propaganda should not always be synonymous with "evil", Hitler or its offspring of fascist clowns (White Power, Ku Klux Klan, The Aryan Nations, etc.). It should rather be viewed as a very effective means of rallying otherwise dispersed and ignorant masses to one exceedingly important and increasingly worthy cause. The imminence of the new millennium offers the unforeseen danger of the cleaned slate. Past crimes against humanity, Genocide, Holocaust and the remaining lot, should never suffer the ravages of revisionism or just simply the fraudulent optimism of the shiny happy people of the guilt-free bourgeoisie. Armenians should not be forsaken to rot in the dark and dingy oubliettes of the mercantile contracts' imposed forgetfulness. And the youth has the most power to cause reform than all the superpower corporations, more than all the politicians, and more than all the specialistes combined... ■

PROPAGANDA: SPREAD OURS TODAY!
(Author's note: If you need tips and pointers on propagating our own propaganda, a visit to Turkey's official Minister of Foreign Politics website or www.turkishforum.org at should do the trick. They are chock-full of indoctrinating goodness...)

ՄՇԱԿՈՅԹԸ ՈՐՊԷՍ ՄԻՋՈՑ

Լալէ Մանճիկեան
Լեռն Շանթ մասնաճիւղ

Յաճախ կը գտնուինք կացութեան մը առջեւ երբ ոչ-հայ դասընկեր մը, աշխատակից մը կամ անծանօթ մը անտեղեակ հայերու մասին եւ հետաքրքրուած մեր ինքնութեամբ, հարց կու տայ թէ ո՞վ ենք մենք եւ ու՞րկէ կու գանք։ Անմիջապէս, մէկ շունչով, տեղեկութիւններ կու տանք նշելով Հայաստանի աշխարհագրական դիրքը եւ շեշտելով որ մենք, մեր իւրայատուկ լեզուն ու մշակոյթը ունինք։ Խօսակցութիւնը կը շարունակուի եւ ընդհանրապէս կը հանգի անխուսափելի նիւթին՝ ցեղասպանութեան։ Շատ անգամ, անոնք զարմանք կը յայտնեն ըսելով թէ ինչ՞պէս կը պատահի որ չեն լսած մարդկութեան դէմ գործուած այս ոճրային արարքին մասին, ո՛չ թերթերէն ո՛չ հեռատեսիլէն եւ ո՛չ ալ շարժապատկերներէն։ Դժուար է հաւատալ այս հաստատումին եւ այս իրողութեան պատճառները բացատրել։

Յստակօրէն, միջազգային մամուլին մէջ սակաւաթիւ են հայկական եւ Հայ Դատի մասին նիւթերը։ Բայց եւ այնպէս կարելի չէ անտեսել որ այս ուղղութեամբ Հայ Դատի յանձնախումբերը կը տանին մեծ աշխատանք։ Մամուլի միջոցաւ, ժողովուրդին կը փոխանցուի լուրեր եւ տեղեկութիւնները։ Արդե՞օք մինչեւ հիմա բաւարար ձեւով չէ փոխանցուած այս տեղեկութիւնները։ Ի՞նչպէս բացատրել մեր ոչ-հայ բարեկամներուն անտեղեակ ըլլալը։

Աշխարհի չորս կողմերը հայութեան տարած աշխատանքին կորիզը կը կազմէ ընդհանրապէս քաղաքական շրջանակներու մօտ ծանօթացնել Հայ Դատն ու մեր պահանջատիրութիւնը։ Անկասկած տարուած գործը եղած է արդիւնաբեր։ Արդէն իսկ որոշ երկիրներ ճանչած են **1915**-ի ցեղասպանութիւնը, ինչ որ արդիւնքն է քաղաքական հետեւողական հետապնդումներուն։ Հայ Դատի յանձնախումբեր եւ այլ կազմակերպութիւններու վրայ ճնշում կը բանեցնեն, մեր իրաւունքները պաշտպանելու համար, եւ մանաւանդ կը պահանջեն որ թրքական կառավարութիւնը ճանչնայ ցեղասպանութիւնը, ապա վերադարձնէ գրաւուած հողերը եւ կատարէ վնասներու յատուցում։ Տարուած այս հսկայ աշխատանք կարծես թէ չէ ընկալուած ընդհանուր հասարակութեան կողմէ **(general public)**, որոնք կարծէք թէ երբեք չեն հետեւած լուրերուն, չեն տեսած մեր ցոյցերը եւ չեն կարդացած յօդուածներն ու նամակները եւ մնացած են անտեղեակ ու անտարբեր։

Շարունակելով քաղաքական այս անհրաժեշտ գործը, արդե՞օք կարելի չէ ընդարձակել այս աշխատանքը, եւ քաղաքականին կողքին, նոյն լրջութեամբ եւ հետեւողականութեամբ, տարածել եւ ծանօթացնել հայ մշակոյթը (երաժշտութիւն, կերպարուեստ, ճարտարապետութիւն, պարարուեստ, գրականութիւն, եւայլն), անցեալի եւ ներկայի հայ ստեղծագործութիւնները եւ արժէքները։

Մենք՝ իբրեւ հայ երիտասարդներ, գործադրելու համար այս ազդեցիկ միջոցը, պէտք է նախ լաւ ճանչնանք մեր դարաւոր մշակոյթը եւ ապա զայն որպէս միջոց գործածելով փորձենք մեր շրջապատին ծանօթացնել մեր ազգը, մեր պատմութիւնը ու մեր արդար դատը։ ■

WE

What are we, after all,
we and our land?
Let us try for once not to mince our words:
If a ship, then aground on rocks.
If a vase, then full of tears.
If earth, then petrified by fear.
If stone, then cracked with pain.
A great sprit, but with no flesh.
Unique in qualities, but without quantity.
Brave generals, but with no armies.
Adoration, but of the past and ruins.

What are we, after all,
we and our land?
Even if we try to mince the truth!
We are tourists in our own land.
Guests in our own homes.
A river with only one bank,
A mountain which we only view from afar,
An unpeopled land,
a landless people,
and scattered beads which cannot be restrung.

By Gevorg Emin (1919-)
Translated by Gerald Papasian
Sojourn at Ararat



Armenian prime minister shot as gunmen attack Parliament session

October 27, 1999
Web posted at: 10:23 a.m. EDT (1423 GMT)

YEREVAN, Armenia -- Gunmen opened fire Wednesday in the chamber of the Armenian parliament during an address by Prime Minister Vazgen Sarkisian, an official said. News reports said Sarkisian was among those injured in the shooting.
Initial reports said Sarkisian had been killed, but an Armenian journalist, Haroutiun Khachatrian of the Noyan-Tapan news agency, told CNN that Sarkisian was wounded and was taken to a hospital.
The shots rang out as Sarkisian was delivering a speech, said Vage Gabrielian, spokesman for the president's office. He said police had surrounded the building.
A1Plus, a local television station, reported that eight people had been killed and several others taken hostage. The presidential spokesman refused to say if there were any casualties.
Frightened lawmakers ran from the building. The unidentified gunmen were believed holed up inside.
The premier's speech was being carried live on Armenian radio and the transmission was cut after the shooting started, the ITAR-Tass news agency reported.
Armenia became an independent republic following the Soviet collapse in 1991 and has endured years of political turmoil. Sarkisian is number two in the country's government.
The 40-year-old former athletic instructor and Soviet propaganda official was appointed premier by President Robert Kocharian last June.
Sarkisian is an ally of Armenia's Soviet-era leader Karen Demirchian, with whom he co-chairs the hard-line Unity Party. Demirchian is speaker of the parliament and reportedly he, too, was in the chamber at the time of the attack.
Sarkisian's political movement forced the resignation of President Levon Ter-Petrosian in February 1998. It accused him of pursuing "defeatist" policies on the issue of independence for the Armenian enclave of Nagorno-Karabakh by agreeing even to discuss returning territory to Azerbaijan.
Sarkisian previously headed a nationalist group representing war veterans who fought in Nagorno-Karabakh. Armenia and Azerbaijan fought a major war over the enclave.
The premier's party was closely tied to a militia group known as the Yerkrapah Battalion, which Western human rights groups have accused of harassing religious organizations, especially those that discourage military service.

Ռուբինա Քիւփէլեան
Լեւոն Շանթ մասնաճիւղ

Ո՞վ է Դաշնակցականը

Ար պասմութեան ծանր ու խաւար օրերուն էր, որ ծնունդ առաւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, **1890**-ին։ Անոր հիմնադրութիւնը դարձած էր հրամայական պահանջ եւ ոչ թէ պատահականութեան արդիւնք, որովհետեւ Թուրքիոյ մէջ ապրող հայ ժողովուրդի ֆիզիքական, տնտեսական եւ քաղաքական պայմանները այլեւս անհանդուրժելի դարձած էին։

Հ.Յ.Դաշնակցութեան հիմնադրութեան մասին երբ կը խօսինք, միշտ կը յիշենք Երրորդութեան անունները՝ Քրիստափոր, Ռոստոմ, Զաւարեան որ իրենց հիանալի գաղափարաբանութեամբ, հայրենասիրական հարազատ ոգիով, անձնուիրութեամբ, ազգասիրութեան եւ ազատագրութեան հաստատ համոզումներով ու վճռականութեամբ հզոր կազմակերպութեան մը վերածեցին Հ.Յ.Դաշնակցութիւնը։

Մուտք կուսակցութեան շարքերը՝ **18**-ը տարեկանէն վեր ամէն անհատ, առանց սեռի խտրութեան կրնայ Հ.Յ.Դ. շարքերուն անդամագրուիլ։

Իսկ Դաշնակցութեան շարքերը մտնող անհատը պէտք է երդումը մը կատարէ։ Իսկապէս լուրջ յանձնառութիւն մըն է որ երիտասարդը վերոյիշեալ երդումը կատարելով կը մտնէ կուսակցական շարքերը , մանաւանդ երբ կ'երդնու կեանքի գնով ծառայել հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին։

Շատ անգամներ իմացած եմ մեր ընտանեկան յարկէն ներս եւ մեր վարիչներէն որ եթէ երիտասարդը հոգիով ու գաղափարով չէ պատրաստուած այդքան պատասխանատու պարտականութիւններ ստանձնելու, նախընտրելի է որ չաճապարէ, այլ լաւ մտածէ, ուսումնասիրէ եւ վերջը գործադրէ։

Դաշնակցութեան շարքերուն արձանագրուելէ առաջ, առանց յստակ գաղափար կազմելու եւ համոզուած ըլլալու կուսակցութեան ծրագիր կանոնագրին, պէտք չէ երիտասարդ մը արագ այս քայլ առնէ, պարզապէս բան մը ընտրած ըլլալուն համար, որովհետեւ յետագային երբ կուսակցական պարտականութիւններ կամ ազգային զանազան գործեր վիճակուին իրեն, որպէս շարքային ընկեր պարտատր է համբերութեամբ, գիտակցութեամբ եւ ամենայն նուիրումով իրականացնէ իրեն վստահուած գործը, ապա թէ ոչ կրնայ յուսալքուիլ անտարբերութեան եւ անհոգութեան ճամբան բռնել։ Իսկ յետագային իր սխալ արարքներուն համար վտարուիլ կուսակցական շարքերէն։

Ո՞վ է Դաշնկցականը, հարց կուտանք։ Իմ համոզումով Դաշնակցականը ազգասէր եւ հայրենասէր է։ Դաշնկցականը անկեղծ ու պարկեշտ է։ Դաշնկցականը մաքրոգի, խոնարհ ու ուխտեալ զինուորն է իր ազգին։ Դաշնակցականը բարոյական նկարագրի տէր անհատ մըն է։ Դաշնակցականը կարգապահ եւ պարտաճանաչ է։ Դաշնակցականը միշտ հաւատարիմ կը մնայ կուսակցութեան դաւանանքին եւ կ'ենթարկուի իր գերադաս մարմիններու հրահանգներուն։ Դաշնակցականը կը հաւատայ հայ ազգի յաւերժութեան եւ Անկախ, Ազատ ու Միացեալ Հայաստանի իրագործման։

Ահա թէ ինչու դիւրին է դաշնակցութեան շարքերը արձանագրուիլ բայց շատ դժուար է հաւատաւոր, նուիրեալ գործոն դաշնակցական մնալ։ ■

Խեղդաման

«Կարմիր Լուրեր Բարեկամէս»

Սիամանթօ

Ու գետնափոր նկուղին մէջ քառասուն անձ՝
Արջառներու սարսափահար հօտի մը պէս,
Որ աւազահողմին հարուածներէն կը հալածուի,
Մահուան դիմաց դողահար եւ մէկզմէկ ջախջախելով՝
Չորս պատերուն մէջը խաւարտչին՝ խռնուեցանք...։
Ապառաժի լռութիւն մը իր սարսափովը կը ծանրանար,
Շշուկ չի կար, շնչող չի կար շրթունքները փակ էին,
Եւ ամենուս նայուածքները քստմնելի եւ դիւային,
Մէկզէկու վրայ յառած՝ մէկզմէկու մահ կ՛ուզէին...։
Արեւծագէ մը մինչ՝ արեւծագն յաջորդ,
Այսպէս անձայն եւ անօթի, գերեզմանի քարերուն պէս՝
Մենք մեր մարմնոյն վրայ, մեր սարսափն երկաթեցինք...։
Ու մեր թագուն կատաղանքն եւ կարօտը կոտորելու
մտածումով՝
Մեզմէ շատերն սկսան մոլեգօրէն իրենց մատերը կրծոտել՛...
Եւ ապառաժեայ լռութիւնը անհունին պէս մեր աչքերուն
կ՛երկարէր...։
Բայց արեւին տակ՝ հազարատոր անասնադէմ բարբարոսներ՝
Բերրի դաշտերն ու գիւղերն աւերելէ դեռ չի յոգնած,
Մեր թագստոցը փնտռելով՝ մեր մահը դեռ կ՛ուզէին...։
Եւ գետնափորին մութերուն մէջը մահացնոր՝
Մենք սարսափո՛վ, սարսափո՛վ՝ սարսափո՛վ էր որ լսեգինք,
Հրազէնի, նիզակներուն սուիններու եւ սուրերու,
Կայծակնահար շառաչիւնն որ արեւին տակ կը վառէր...
Ու դիակնե՛ր, դիակնե՛ր մեր նկուզին եզերքներուն վրայ,
Արմատախիլ ծառերու պէս, սրսփանքով մար կ՛իյնային,
Հոգեվարքի հռնդիւններ՝ մերթ ամեհի եւ մերթ խուլ՝
Պատերէն ներս, նկուղին մէջ կու գային մեզ ցնորել։
Եւ հողապատ ցեղումէն, որ մեր վրան դագաղի մէ պէս կը
փակուէր՝
Վերը հոսող տաք արիւնը յորդառատ՝ ծակտիքներէն վար
սուզուելով...
Սկսաւ ալ կաթի՛լ, կաթի՛լ մեր դէմքերուն վրայ ծորիլ...։

Բայց նորածին մը նորէն սուր ճիչով մը սկսաւ լալ,
Մեր դաւաճանն անտարակոյս այդ անմեղը պիտի ըլլար,
Որոշման մը, եղեռնի մը, ոճիրի մը յոյսը միայն կար մեզի,
Երբ իր մայրն հեծեծանքով մը, ալ վերջապէս փսփաց...
-Աստուած մեզի թո՛ղ գթայ, ստինքներս պարապ են.
Ա՛լ կաթիլ մը կաթ չունիմ, մինչեւ արիւնս ծծել տուի...:
Ա՛լ կաթիլ մը կաթ չունիմ, ինչ որ կ՛ուզէք վճռեցէ՛ք...

-Պէտք է խեղդե՛լ, ըսաւ մէկը իր բազուկն բարկութեամբ
մը երկարելով,
-Պէտք է խեղդե՛լ... փսփսացին քառասուն անձ նոյն ատեն...
-Նախ եւ առաջ զիս խեղդեցէք եւ յետոյ իմ զաւակս...

-Ձայնը առին, տանիքն արդէն, բրիչներով կը փորեն...
-Բոլորս մէկ մատնուեցանք, արդէն տանիքը կը փորեն...
-Արդէն հողը վար կը թափի, լոյսն արդէն կ՛երեւայ... :
-Կը պաղատի՜մ, խեղդեցէ՛ք զիս, ահաւասիկ իմ կոկորդս
եւ կոկորդն իմ զաւակիս...
Ու հայ մայրն իր վզին հետ զաւակին վիզը մութին մէջէն մեզ
երկարեց...
Խաւարին մէջ երկու բազուկ օձերու պէս գալարուելէն,
Մանկան վիզը գտնելով ահեղութեամբ մը զայն սեղմեցին...:
Լռութիւնն այս անգամ նկուղին մէջ մրրիկ մ'էր:
Եւ րոպէ մը կարծեցի որ, բոլորս մէկ արժանապէս մահացռ
անք...:
Պահ մը յետոյ խաբուած մարդու հայհոյներով տղմաթաթաւ,
Զգացինք որ արիւնախում խուժանը յուսահատած կը հեռանար:
Փրկութի՞ւն էր մեզի համար: ստրուկները կը փրկուի՞ն: Այսպէս
պէտք է փրկուիլ... :
Ու ամէն օր այդ խեղճ կինը կիսամերկ՝ ճամբաներուն վրայ
կեցած,
Անծանօթի՛ն, անցորդի՛ն, թշնամիի՛ն եւ օտարի՛ն.
Քաղաքներուն փաթթուելով խենթի մը պէս կ'աղաղակէ..

-Սա՛ ձեռքերս կը տեսնէ՞ք, կը տեսնի՞ք սա ձեռքերս,
Ես էի որ ասոնցմով, նկուղին մէջ, իմ նորածինս խեղդեցի...
Հաւատացէ՛ք, ես էի որ զայն խեղդեցի: ի՞նչ անարդար մարդեր
էք,
Դուք ալ գոնէ զիս խեղդեցէ՛ք, իմ ձեռքերս անզօր են.
Ես էի որ նորածինս նկուղին մէջ բոլոր ուժովս խեղդեցի...
Սիրտ չունի՞ք դուք. խեղդեցէք զիս, իմ ձեռքերս ալ ուժ չունին...

Get Ready

ARFYOC/AYF Alumni Weekend

May 5-6, 2000
In Montreal

For more info:

Nairie Papakhian (514) 336-1392
Papken Garabetian (514) 495-1733
A.R.F.Y.O.C . C.E. (514) 331-6548
ardziv@ardziv.org

ARFYOC Seminar 2000

Camp Christie Lake

May 20-22, 2000

Ask your local chapter executive for more details